

մեն բան ուսանելու օդտակալորութեան վրայ մերթ ընդ մերթ կը կասկածիս , այս վերջին օրինակով պիտի համոզուիս , որ եթէ բոլոր աշխարհ քեզ նման անտարբեր ըլլար , քարին ծակոտինութիւնը անծանօթ պիտի մնար և անով պարզուաներ չինելու գիւտը տեղի չըսկատի ունենար և դու որ ձմեռը մեծ քաղաք մը կը բնակիս , ուր վճիտ չըրոյ աղբիւրներ չը կան , դատապարտուած պիտի ըլլայիր աշխեղի ջուրեր խմելու :

Մարմնոց այս ծախովին նութիւնը , ապայի բնական մարմնոց ընդհանուր բաժանութիւնը՝ մարմնոց ընդհանուր յագիտաները կը կոչուին , որովհետեւ ամեն մարմին , բնշպէս արդէն տեսանք , քիչ կամ շատ այս յատկութիւններն ունի :

(Նորունակիլը :)

ՈՒՂԵԽՈՐՈՒԹԻՒՆ

Ի Սուրբ Էջմիածին . 1876 Յունի 20 .

(Հարունակութիւն . առ թիւ 6 .)

Զարմանալին այն է որ Մալականները օտար երկիրներէ գաղթած , մանաւանդ թէ հալածուած , իրենց ժրածան աշխատութը ամեն բան կարգաւորելին զինի , բաւականի հարստացած և ապահով կերպիւ կ'ապրին . իսկ Հայք որ բնիկ երկրին տէրը պիտի լինին , մնացած են այդպիսի ողորմելի կացութեան մէջ . պատճառը ոչ այլ ինչ է , եթէ ոչ իրենց անհոգութիւնը և անտարբերութիւնը , խափանելի և այպանելի այն սովորութիւնը . որ մէջէրնին իբրեւ առած եղած է . չասեմ օրէնք , մէջ նախնիներն այսպէս դժուած էնք . թերեւ սահմանիք ըստածնին այն պիտի լինի՞ որ Պարսկական և այլ զմնազան ազգաց

բռնութեանց ժամանակ իրենց նախնիքը այդ յետին թշուառութեան հաստացած են , և իրենց ալ ժառանգ մը նացած է . այլ այժմ այդ ժամանակ ները անցած են . կան նաեւ նախնի սերունդէն մնացորդներ քաջ և զօրեղ առոցդ հասակով երիտասարդներ , անուանի ձիտվարժութեան և վինաշարժութեան մէջ . ուսմանց և քաղաքակրթութիւնը մէջ վարժ և գործոն անձինք ևս շատ կը գտնուեին , որոնք թէ Տէրութեան պաշտօններու և թէ տուր և առիկ գործերու մէջ յառաջացած են : Այս փոքրիկ գիտողութիւնը ընելին զինի կը գառնանք մեր նպատակին : Աստի փութով մեկնելով կանուխ ժամանեցինք Մալականաց գիւղ մի որ գետակին ափունքը ձորակին մէջ շինուած է : Մալականք անտառէ պարապ մը նացած լեռներու կողերը ըստ կարի մշակած են , կանայք առ տնին գործս ժիր և աշխատասէր , տարազ զգեստուց և լեզու իրենց հայրենեացն է , արեւելեան լեռան ստորոտը բարեհամարդիւր մի կը բվի : Դիտողութեան առնելու արժանաւոր կեաը սաէ : Երեկոյին այս սակաւաթիւ Մալականաց հօոր , սրջառաց և երիվարաց նախիրը արօտէն գառնալով եկան , ամենեքնան պարարտք և առոցդ , իւրաքանչիւրը յատկացեալ տեւներու եւ գոմերու բաժնուեցան , արդիւնաբեր իւրաքանչիւր իւր տեսակին մէջ : Բը նակչաց սակաւութեան նկատմամբ հարստութիւնը շատ էր , և զարմացման արժանի , սոքա հալածեալ և արսորեալ մարդիկ , Երբ այսպիսի բնակութիւնն հաստատեցին , և Երբ այսքան կենդանիներ գարմանեցին և աճեցուցին , և այսօր մեծ հարստութեանց տէր եղած հանգիստ կ'ապրին . ուրեմն աշխատութիւնը անտեսագիտութեան հետ լորդելով ամեն

գժուարութեանց կը յազվէ , և այս պիսի բարօրութիւն յառաջ կը բերէ , և այս գիւղական կեանքը , թշուառ քաղաքացւոց կեանքէն շատ խիստ վերատեսանելի է .

Գիշերը մեր սովորութեան համեմատ կառքին մէջ ննջեցինք , բայց սաստիկ ցուրտէն անկարելի եղաւ հանդիսու ընէլ , ստիպուեցանք գիշեր ժամանակ աճապարանօք մեկնիլ և մինչև առաւսու Տիլիմանի բարձր և անտառուտ լեռները ելլալ շնուրած շեղ և թեք օձապտոյտ ձանալարհով . արեգակը դեռ հաղիւ իւր ձառագայթները արձակած զիմացի լեռներու գագամը կը լուսաւորէր , անցանք Ավենակայ Հայաբնակ գիւղը և համանուն կայանը՝ հասանք Զապորիչը կոչուած գիւղը մեզմէ հեռի թողավ անտառուտ լեռները և մացառները , և ըսկըսան ներկայանալ մեղ նոր աեսարաններ , ընդարձակ գաշտեր լեռներ և բրախներ ոմանք այն ինչ մերկացած հասկէ և որպէս , եւ ոմանք զերծած յարօրէ և ՚ի մշակութենէ , մի կողմը բարձր և լերկ բլակիներ և միւս կողմը Գեղամայ գեղածիծաղ ծովս երեւլի . բնաւ ըրտեսնուիր անտառի և փայտի նշմարանքներ , տեսանք ցամաքաբերդ Հայաբնակ գիւղը , որոց յանդիման կերեւի Սելվանայ կղզեակը Եկեղեցւոյ գմբեթը զանդակատունը միաբանաց իցերը , և քանի մի ծառատունկ . ծովակը հարաւէն հիւսիս կարի երկարած , իսկ յարեւելից յարեւմնուտու ոչ այնչափ , ջուրը քացր , կը բերէ առատ ձիններ 12 տեսակ իւրաքանչիւր ամիս մի տեսակ , անուանի է իշխանածուկն . կարմրախայտն և կողակն . ունի օժանդակ գետեր , որոց որոշեալ ժամանակն ձիանց բազմութիւնը երթեւեկելու ատեն , մեծ քանակութեամբ ձուկ կ'որսան , և այն շատ գիւրութեամբ .

ծովուն արեւելեան կողմը կը նշմարուին հին ամրոցած եւ շնուրութեանց հետքեր . Աւելի ընդարձակ տեղեկութիւն անու , Սորոնդրութեան 5 գաւառացն Հայապանի : Գեղամայ ծովուն եղեցքը արքունի ձանապարհին վերսց Մալականք շնած են մեծ գիւղ մի Ելենայ անուն , և կայսան . բնակիչք իրենց թըւոյն համեմատ ունին ընդարձակ դաշտեր , մշակուած իրենց սովորութեան համեմատ , բերդին առատութիւնը կալերուն շատութենէ կրնայ գուշակուիլ . գիւղին շնուրութիւնը տեղտեղ բարեկարգ և քարուկիր , և կ'աշխատին աւելի ընդարձակել ծովեղերքը , գարահատին օժանդակութեամբ . կը դառմաննեն ոչխարաց և անասնոց ջոկեր , որոց բազմութեան համեմատ պատրաստած են գոմեր և մակաղատեղի խաշանց , ասոնցմէ զատ կը սընուցաննեն հաւերու բազմութիւն , և ծովեղերքը սաքերու և բագերու ահագին երամ անթուելի :

Ձինորուութեան մենավաճառութիւնը մէծ շահէ Տէրութեան , օրէնքէ երեք տարի շարունակ որսալ , իսկ ըրրորդին բոլորավին արգիլուած է . որպէս զի ձկունք վերստին բազմանան . ծովէն գետակ մի կը բաժնուի գիւղականաց և արտօրէից պիտոյիցը համար . Մալականաց կանայք առ տնին գործը աւարտելէն զինի , կ'ընկերանան իրենց արտնց աշխատութեանը , զր օրինակ հնձել կրել , սայլավորել կասուլ , սոքա երկրագործութեան մէջ ընտանի կենդանիներէն աւելի գրաստ և ձի կը գործածեն , օրինակի համար 5 ձի միաշար իւրաքանչիւր կամմասայլով , մի փոքր մանուկ կարող է կառավարել երիլարաց արագութեան համեմատ . Այս գիւղը Հայ երիտասարդները սայլերով կարմրուկ կերաս (Գլուխաց) բերած էին եւ ցորենի հետ կը փոխեին

հաւասար չափով, այսինքն մի չափ ցորեն և մի չափ պտուղ:


Այս գիւղէն մեկնեցանք շարունակ նկատելով ընդարձակ գաշտերը, ոմանք նոր հեծուած, ոմանք սպիտակացած և ՚ի հունած հասած, ոմանք գութանով հերկած, հողը տեղ աեղ խիստ սեւ, գիւղականք առ հասարակ կալի և հունձի զբաղած էին, և այս կողմերը Հայոց գիւղերը խիստ շատ են, թէ եւ կը գտնուին երբեմն Մալական ներ եւ Թիւբքեր, հիւսիսային կողմը կ'երեւին Արագած լերան շլթաները, որոց կողերը կան գիւղեր ծառատուն կեր այլովքն հանդերձ, իսկ գագաթը բոլորովին լերկ, գիւրամատչելի եւ արգասաւոր տեղերը մշակուած: Ճանապարհին վերայ է Հայոց Ախտայ գիւղը, ուր կան նաեւ քանիմի Մալականաց տուներ, Հայոց տուները, ինչպէս յառաջադոյն ըստնք նախնի զրութեան համեմատ, իրբեւ մի մի հողակցած ցած և անշուք, ունին մի Եկեղեցի, Հայք բոլոր ընտանեօք կունքը աւարտելու կ'աշխատէին, այս ճանապարհը շարունակ մինչեւ երեկոյ գնացինք, աստի երեւեցաւ Մասիս լերան սպիտակափայլ գլուխը և ժամ Ան հաղիւ գիւղի մի Պանդոկ հասանք, որոց բնակիչը Հայադի, գիւղին ջաւրը և պարտէղները խիստ առատ էր:

Աստի առաւոտուն կանուխ մեկնեցանք, ժամ 2 ին հասանք Քանաքեռ գիւղը բնակիչը Հայք, կաւակերտ տանց մի մասը հին աւերակաց վերայ շինուած է և մի մասը գիւղին ստորին կողմը. հնութեանց հետքերէն խոչ արձան մի և կիսաւեր եկեղեցի մի մընացած է. ջուրը և պարտէղները առատ, մքեղանաց հետ ընաիր է ըսպիտակ թութն, կան ճոխ այգիներ, յորոց լըլինի աղնիւ գինի, մինչեւ ցաստ Կոռալսրութիւնը 5 տեղ ճանապար-

հի սահմանեալ տուրք կառնու իւրաքանչիւր անցորդէ: Մինչդեռ արեգու կը հորիզնէն կը բարձրանար և տաղնապիչ ջերմութեամբ նեղութիւն կը սպառնար, հասանք Երեւան Հայոց հին քաղաքին արեւելեան բլակը, ուսաի կ'երեւի տափարակ գաշտի վերայ տարածուած ամբողջ քաղաքին տեսարանը խառն այգիներով և պարտէղներով, քաղաքին արեւելեան փողոցը թէ և ըստ նոր զրութեան լայն, բայց կարի անհարդ, հարաւային կողմն է հին բերդն, մասամբ իւիք քանդուած, մաս մի զօրանոց Ռուսաց, կան այնպիսի մասնաւոր տեղիք՝ որ կառավարութեան պաշտօնէից կը ծառայեն. իսկ արեւմտեան գետին կողմը ամբողջ, արեւելեան թաղը ըստ նոր զրութեան շինուած է գեղեցիկ և կարգաւորեալ, իսկ մնացեալները հին զրութեամբ. կան քաղաքին մէջ իջեւանատեղիք (Քելշանարայ) այլ ոչ կարգաւորեալ, նշանաւոր է այլազեաց Զբուն մզկիթն, որոց ամբողջ գմբէթն և աշուարակն (Ֆնարէ) կանաչագոյն յախճապակեաց յօրինուած, բնակիչք Հայք, Պարսիկը, և Ռուսոք սակաւաթիւ. Հայք ունին վեց Եկեղեցի, և անապատն Առնանիա Առաքելց, (այժմ Եկեղեցի ժողովրական), իւրաքանչիւր Եկեղեցի ունի ծխական դպրոց, և մի եւս զիմնկան, ուր կ'առանդուին ուսմունք Հայ և Ռուս լեզուաց ՚ի հաշիւ Տէրութեան. Առաջնորդ Եպիսկոպոսն իրը փոխանորդ Կաթողիկոսին նստի աստ, քաղաքին արեւմտեան կողմէն կանցնի Հրազդան գետը, որ Պարսիկներն ոչնչի կոչեն, յորոց վերայ ձգուած է քարուիիր կամուրջ, շինուած ևն կարգաւորացներ, գետը զանազան ջրմուղներով և առուներով բաժնուած է, թէ քաղաքին այլ եւ այլ թաղերուն պէտքերը հոգալու, և թէ քաղաքին

գուրսա այդիները և պարտէզները ոռու գելու , և թէ քաղաքին ստորին կողմը և զած գիւղերուն անդաստանները . Այդիները և պարտէզները խիստ առատ են և խնամով մշակուած , զանազն տեսակ մրգեցնները երկրացիք առատութեամբ կը վայելին , գովելի է դիմին : Այս քաղաքին վերայ Օսմանցիք և Պարսիկը շատ անդամ մեծամեծ պատերազմներ ըրին իրարու ձեռքէ խլելու պայմանաւ , երբեմն մնաց ընդ իշխանութեամբ Օսմանցւոց իւր շրջապատ սահմաններով , առաջին անգամ Սուլթան Սէլիմայ Առաջնոյ , և յերկրորդու մն յաւուրս Սուլթան Մուրատայ չորրորդի կրին անդամ . եւ հուսկ ուրեմն վերջնին գաջնադրութեան , Օսմանցիք այս քաղաքը իւր սահմաններով թողուցին Պարսից , և ինքեանք տիրեցին Պաղտատ քաղաքի և նահանգի նորին :

(Շարունակէլ :)



ՆԵՐՔԻՆ ԾՈՎ

Ա. ՃԵՐԻԿԻ ՄԷԶ

Ալճերին՝ Ավրիկէի մէջ Պերպերիստանի մէկ մասն է , որ Եգիպտոսէն սկսեալ մինչեւ Ատլանտիսան Ոլկիանոսը կը տարածուի . նախնեաց ծանօթ էր , ինչպէս Եգիպտոսը , և կը բընակէին այս տեղ Մաւրիտանցիք և Նիւմիգացիք : Այս երկիրը Կարկեդոնացւոց ժամանակ , որոց հայրենիքն էր , շատ անուանի էր , յետոյ Հռովմէցւոց իշխանութեան տակ իյնտով՝ հետզհետէ իւր նախկին փառքն ու

փառաւորութիւնը կորանցուց : Սարակինոսներին 697ին այս տեղէն հալածեցին զնուովացեցիս : Գաղղիացիք 1830ին Ալճերին առնելով՝ մուտ գտան այս երկրին մէջ և այժմ Գաղղիական գաղղթականութիւն է Ալճերին , որ Գաղղիացւոց տիրելին ՚ի վերյառովաշտագիմիլու և քաղցքակրթուելու վրայ է :

Ատլաս լերանց շղթայն Պէրպէրիստանը երկու մասն կը բաժանէ արեւմուտքէն դէպ արեւելք . հիւսիսային կողմը Թէլ կ'ըսուի , ուր ցորենի վերաբերեալ արմտեաց մշտկութիւն կը լինի . հարաւային կողմն է Ասկարան , կամ մէջ անապառը , որ նօյնպէս կ'անուանի Պիլար-ի-լու-ձելիդ (երկիր արմաւենեաց) : Ալճերիի հարաւային կողմը՝ Պիլարայէ մինչև Թուքուրդ եղած լայնութեամբ արևելքէն դէպ արեւմուտք Շօթ մասնաւոր անուամբ ընդարձակ երկիրներ կան , որք Սահարայի մասերն են եւ գրեթէ բոլորովին անապատային են : Շօթերը ձմերան՝ անձրեւներէն ձահիճներ և լճեր կը ձեւանան . իսկ ամարան մեծ մասամբ ջնրմութեամբ կը ցամաքին : Երկար ժամանակէ ՚ի վերկարծիք կար որ այս երկիրները յած են Միջներկականի մակհաւասարութենէն , և կենդադրէին , որ երբեմն հաղորդակցութիւն ունեցած ըլլան Միջներկականի հետ ձեւանալով իբրեւմասն Գապէսի ծոցին :

Այս ծոցի ափանց վերայ , որ այսօր երաշտ և անբնակէ , երբեմն կային ծաղկեալքաղաքներ . ամբողջ գտաւոր , որ այժմ լոււած է աւազներով եւ արեւգակէն լավիզզւած , առաջ ունէր ճարտարարուեստ և վաճառաշահ ժողովուրդներ . և այն ատեն ծովը ցամաքին մէջ կ'երկարածը գէր դէպ արեւմուեան կողմը հարիւրտան եւ հինգ մղնի չափ : Ասիկայ ծոց Թրիթոնի կ'ըսուէր , որ հիմա ևս